



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԾԱՆՕԹԱՅԱՒ ՀԱՅ ԱՐՅԵՍՏԱՎԱՐԺՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆՑ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՈՒ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ

Ազգային Առաջնորդարանի յարկին տակ, Երեքշաբթի, 18 Յուլիտեմբերի կեսօրին, տեղի ունեցավ իւրայատուկ եւ ուշագրաւ ձեռնարկ մը, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին շուրջ համախմբեց Լոս Անճելըսի շրջանին մէջ գործող հայ արհեստավարժներու եւ մասնագիտական ասպարեզներու հետեւորդներու ընկերակցութիւններու եւ հիմնարկութիւններու ներկայացուցիչներ, առիթ ընծայելով, որ լուսարձակի տակ բերուի մեր մարդուժի կարողականութիւններն ու զանոնք հաւաքականութեան ի սպաս դնելու հեռանկարները:

Հանդիպումը կազմակերպուած էր հովուապետական այցելութեան առիթով Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ կազմուած՝ Մամուլի ու Յարաբերական Յանձնախումբին կողմէ եւ կը համապատասխանէր գործի մարդոց ու մարդկային ծառայութիւններ մատուցող արհեստավարժներու հետ հանդիպում ունենալու Վեհափառ Հայրապետի փափաքին, մանաւանդ, որ Կաթողիկոսարանը վերջերս ձեռնարկած է աշխարհի տարածքին հայկական մարդուժի հաւաքագրման աշխատանքին:

Սօտաւորապէս հարիւր ներկայացուցիչներ ընդառաջած էին Յանձնախումբի հրաւերին եւ ժամանած՝ Ազգ. Առաջնորդարան: Հանդիպումը կազմակերպուած էր ճաշի սեղանի շուրջ, Ազգ. Առաջնորդարանի «Տ. եւ Չ. տեր Ղազարեան» սրահին մէջ: Անոնց տրամադրուեցան արհեստավարժերու մասին տեղեկութեանց հաւաքագրման տարազներ, զորս ամբողջացուցին ու յանձնեցին յանձնախումբի:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ ժողովականութեան ներկայացուցիչներու ուղեկցութեամբ, Վեհափառ Հայրապետը սրահ մուտք գործեց եւ յոտնկայս դիմաւորուեցաւ ներկաներուն կողմէ: Աւելի քան տասնեակ մը ընկերակցութիւններ, մասնագիտական կազմակերպութիւններ եւ հիմնարկներ ներկայութիւն էին հանդիպումին:

Բացման խօսք արտասանեց ու հանդիսավարութիւնը կատարեց Մ. Եւ Յ. Յանձնախումբի անդամներէն Տիկին Փաթիլ Աբոշեան-Գասպարեան, որ Վեհափառ Հայրապետն ու ներկաները ողջունելով, շնորհակալութեան խօսք ուղղեց Նորին Ս. Օծութեան, որ ընդառաջած էր նման հանդիպումի մը խնդրանքին: Ան նշեց, որ արդի աշխարհի ընձեռած աշխատանքային մարզերը ու դրութիւնները նկատի ունենալով, անհրաժեշտ է գնահատումը կատարել հաւաքական կարողականութեանց, ստեղծել գործակցութեան կարելիութիւններ ու զանոնք լծել հաւաքականութեան բարիքին: Ան յատուկ կարեւորութեամբ անդրադարձաւ այն իրողութեան, թէ մասնագիտական ու ծառայական բոլոր մարզերուն մէջ կան հայեր, որոնք սպասարկումը բարձր գնահատանքի կ'արժանանայ բոլորին կողմէ:

Առիթ տրուեցաւ, որ իւրաքանչիւր միաւորէ ներկայացուցիչ մը զեկուցական ելոյթ ունենայ: Արտայայտութիւն ունեցան Հայ իրաւաբաններու ընկերակցութեան, բժիշկերու, ճարտարագետներու եւ գիտնականներու, հիւանդապահներու, պետական ասպարեզներու մէջ հայ աշխատաւորներու, ոսկերիչներու, բժշկագիտական տարբեր կալուածներու, Էլեւմտական ու դրամատնային մարզի, առեւտրականներու ընկերակցութեանց ու խմբաւորումներու ներկայացուցիչները, Հայկական Ոսկրածուծի Հիմնադրամի եւ այլ միաւորներու անդամներ: Այսպէսով, հիւրնկալներն ու մասնակիցները ծանօթացան տարբեր ասպարեզներու ծառայող հիմնարկութիւններու եւ ընկերակցութիւններու աշխատանքի բնոյթին, անցեալի ու ներկայի աշխատանքներուն ու սպասարկութեանց, ինչպէս նաեւ ապագայի ծրագիրներուն ու հեռանկարներուն: Բացայայտ դարձաւ, որ հայկական այս միաւորները կը սպասարկեն ոչ միայն ամերիկեան այս շրջանին մէջ, այլ նաեւ նկատառելի աջակցութիւն կը տրամադրեն հայրենի ժողովուրդին:

Զեկուցումներու աւարտին, Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ տարբեր աշխատանքի մարզերու մէջ տարուող աշխատանքներուն ու անոնց մարդասիրական ծառայութիւններուն մասին, ապա հրաւիրեց Վեհափառ Հայրապետը, որ ուղղէ իր պատգամը:

«ՄԱՐԴՈՒԺԸ ՆԱԽԱՄԵԾԱՐ Է ՆԻԹԱԿԱՆԷՆ»

Ուրախութիւն ու հպարտութիւն արտայայտելով հայ արհեստավարժներու թիւի աճումին ու անոնց մատուցած ծառայութիւններուն մասին, Վեհափառ Հայրապետը ներկաներուն ուշադրութեան յանձնեց, թէ ներկայ աշխարհը մակերեսայնութեան ու անորոշութեան ժամանակը չէ, իսկ կեանքի արագ զարգացումը ստեղծած է վիճակ, որուն մէջ աւանդական սահմանագծումները դադրած են գոյութիւն ունենալէ, տարբեր շրջաններու ու կալուածներու մէջ եղողներ փոխադարձաբար կը ներգործեն իրարու վրայ, բոլորը առնչակից կը դարձնեն Նոյն հարցերուն, տագնապներուն ու զարգացումներուն: Աշխարհի տարբեր շրջաններու ու տարբեր կալուածներու մէջ գործողներ շատ աւելի համեմատութեամբ կախեալ են իրարմէ, իսկ համաշխարհայնացումը միայն տնտեսական երեւոյթ չէ, այլ նաեւ կեանքի տարբեր բնագաւառները կլանող, զանոնք իրարու կապող զարգացում: Վեհափառ Հայրապետը նաեւ

նշեց, որ ինքնագոհությունը, եղածով բաւարարուիլը անընդունելի են, մարդիկ ու ընկերություններ պետք է ձգտին նորին, աւելիին, ու այս գործընթացը անվերջանալի երթ է: Վերջապէս, Նորին Ս. Օծութիւնը նկատել տուաւ, որ արհեստավարժութիւնն ու արհեստավարժները իրենց առաքելութեան մասնիկը պետք է համարեն ծառայութիւնը, ընկերութեան զարգացման ու հարցերուն լուծման մէջ ունենան ներդրում, մասնակցութիւն բերեն կեանքի բարեփոխման: Այս մօտեցումով, Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ արհեստավարժ ծառայողները գործակիցներ կը նկատուին եկեղեցւոյ, որուն առաքելութիւնն է ծառայել մարդկութեան ու դիմագրաւել անոր ընկերային եւ այլ հարցերը:

Հետեւեցաւ գրոյցի պահ մը, որուն ընթացքին, Վեհափառ Հայրապետը պատասխանեց ներկաներու հարցումներուն: Արծարծուած հարցերը կը վերաբերէին Թուրքիոյ մէջ բռնագրաւուած եկեղեցիներուն, Հայաստանի ու սփիւռքի մէջ տարածուած աղանդաւորական շարժումներուն եւ մարդկային յարաբերութեանց մէջ նիւթականի ու բարոյականի յարաբերութեանց: Վեհափառ Հայրապետը գրոյցը փակեց ընդգծելով՝ որ մարդուժը շատ աւելի կարելոր է ու նախամեծար՝ քան նիւթական կարողութիւնները, որովհետեւ մարդկայինը աստուածատուր է, մինչդէռ նիւթականը՝ մարդակերտ:

Հանդիպումը վերջ գտաւ Վեհափառ Հայրապետին Պահպանիչով:

HIS HOLINESS MEETS WITH ARMENIAN PROFESSIONALS AT A LUNCHEON HELD AT THE PRELACY

On Tuesday, October 18, 2011, a luncheon was held at the Prelacy during which His Holiness Catholicos Aram I met with Armenian professionals of various fields. The luncheon was organized by the Pontifical Visit Public Relations Committee and was significant in that it related to the program recently initiated by the Catholicosate of Cilicia aimed at gathering information about our manpower in the Diaspora.

His Holiness, accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Councils members, was led to the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall where over a hundred Armenian professionals welcomed the Pontiff.

The lunch meeting provided attendees with a unique opportunity to discuss with His Holiness challenges and opportunities affecting our community and to hear his paternal guidance and message. Attendees were given forms to fill out, which will be submitted to the Catholicosate to assist in their program of gathering data.

Master of Ceremonies Mrs. Patsy Aposhian-Kasparian welcomed the guests, and thanked His Holiness for the opportunity to hold this important luncheon, which she said is about acknowledging the individuals who take on another level of responsibility and burden. "Every attendee here volunteers their talent, skills and knowledge for the betterment of the Armenian community.

Armenians are achieving professional milestones in larger numbers in every professional arena. We all have potential power inside us and it is the request of His Holiness to identify our talents, strengths and skills to serve the better good of all Armenians." She concluded by stating, "Your Holiness, allow our presence today representing 12 active professional organizations to signal our support to your initiative."

An opportunity was given for a representative from each organization to share information with the guests to more closely familiarize them with the endeavors and mission of their specific organization.

The Prelate commended all the organizations present for the work they carry out and for their service to the Armenian community. He then invited His Holiness to deliver his message.

His Holiness expressed joy and pride at the growing number of Armenian professionals. He noted that we must not be satisfied with the status quo, rather individuals and organizations must strive to do more as the work that needs to be done is unending. His Holiness also stated that professionals must consider service as a part of their mission and they, in conjunction with the Church, must reach out to members of society and assist in the betterment of their communities.

A question and answer session followed on topics including confiscated Churches in Western Armenia and the growing number of religious factions in Armenia and the Diaspora. In conclusion, His Holiness stated that manpower is much more crucial than financial capacity, as manpower is God given while the financial is man-built.

The event concluded with the benediction by His Holiness.